Ալիշան (Այր. 198) և համեմատութիւնը ցոյց է տալիս կատարեալ նոյնութիւնը մեր № 1005 նժ.-ի հետ։ Տաբարաղդաբար, ձեռագիրը թուականով յիշատակարան չունի, վերջից թափած լինելով, բայց գրուած է Գեղարդի վանքում Ներքևի լուսանցքի (ԺԷ. տեսր) հե-

Պատկեր 169.

տևեալ նկատողութեան համեմատ. «Քս. Աշ զար. Աթանաս հոգին լուսաւորէ, զփակակալ սբ. Գեղարդեանս՝ որ բազում զթով ի մեզ կու զթա և զիւր ծնօղացն, ամէն»։ Գրչի մի այլ անձի յիշատակութիւն. «յիշեցէք ի քս. զսիրելի եղբայրս մեր զԱռաքելս, որ բազում սէր ցուցանէ առ մեզ», նոյն պիտի լինի Գրիգոր գրչի յիշած Առաքել կրօնաւորի հետ, որ տեսանք 1429 թուին յիշուած։ Մատթէոս գրչի այս գործով Գեղարդի վանքի գրչութեան և մանրանկարչութեան արուեստի գնահատելի մի մնացորդ ունինք ձեռքի տակ։ Մեծ մանրանկարներ չունինք այստեղ, այլ լուսանցքի զարդեր և փոքր ըսկզբնազարդեր, բայց ճարտարապետական, պատկերագրական (պատկ. 165–168) և կենդանագրական ֆիգուրներով (պատկ. 169–173), ինչպէս և Թէոդորոս ստրատելատի ձիաւոր պատկերով, ուշադրութեան արժանի և կարող վարպետի գործ. յատկապէս եղջերուն, մասամբ և առիւծը շատ սիրելի մոտիւներ են իրենց պէսպիսութեամբ, ինչպէս կը տեսնենք, ժամանակակից մի այլ նկարողի համար ևս այս վանքում։ Ձեռագրի ստացողն է Արթուխ Մահդասի միայնակեացը, որի ծնողներն են Էգիլչահ և Խէրիկ, հարազատ եղբայրները Խումար, Ջանիկ և Սահակ, իսկ քոյրերը Թանկիկ և Թամմելիք, յաճախ կրկնուած վկայարանութիւնների վերջերում (*)։

Յովհաննէս աբեղան, հաւանօրէն վերև յիշուած Մատթէոսի աշակերտը հայոց ՉԷ (= 1458) թուին, «ի վանս որ կոչի Յայրիվանս (s!), ընդ հովանեաւ ամենահեալ ս. լուսոյ մաւր Աստծնին. և սբ. տիգիս ուծամուխ սբ. Գեղարդեանս», «ի վայելումն անձին Յակոբ քհի. և զաւակաց իւրոց» գրում է մի Մաշտոց (**)։ Մի տարի յետոյ «ի թվականութիւն. հայկազեան տումարի ի ՉԸ. թվի», և ի վշտաշատ ժամանակի, յորում նեղիմք յանաւրինաց և յանիրաւ պահանջողաց, ի թագաւորութիւն. Վրաց Դաւրկոյ որդւոյ Աղէքսանդրէ և ի հայրապետութիւն. հայոց տն. Գրիգորի յաթոռ սբ. Էջմիածնին, ի ղանութիւն. Ջահան շահի

Պատկեր 170.

որդւոյ Ղարա Ուսուֆին» Աստուածատուր մահդասի աբեղայ քահանան Մատթէոս աբեղայի գրչութեամբ ստանում է մի Տարեգիրք, որ Լազարեան Ճեմարանի

(*) Ձեռ. Էջմ. № 1005 նժ.
(**) Ձեռ. Էջմ. № 1016/1027. 173բ. (Ցաւել. Բ. 48)։